

ԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ

ԵՒ ՆՈՐԱ ՊՐԻՆՑԻՊՆԵՐ

ՀԱՅՈՒԱԾՔ ՀԱՅՈՒԹԵԱՆ

ԴՊՐՈՅԻ ԿՈՒԼՅՈՒՐԱԿԱՆ ԱԶԳԻ ՎՐԱՅ

Հ. Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄԱՐՏԻՆ ՎԱՐԴԱՊԵՏԻԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1883

ԱԶԳԱՅՆՈՒԹԻՒՆ

ԵՒ ՆՈՐԱ ՊՐԻՆՑԻՊՆԵՐ

902.7(47.925)
Ա
ԼՐԱՅ. ՀԱՅՈՒԱԾՔ ՀԱՅՈՒԹԵԱՆ
Զ81.6

ԹՈՒՐՔԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԱԶԴԻ ՎՐԱՅ

Ա 3969

Հ. Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆՑ.

Հայ ազգը իբրեւ կուլտուրա—պատմական տիպ։—Ժամանակակից հայ գրականութիւնը եւ մամուլը։—Հայկական եկեղեցին։—Նորա դերը հայկական ազգայնութեան մէջ։—Ազգային անկախ եկեղեցու գաղափարը։—Որոնք են լինելու հայ ազգի զարգացման պայմանները։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.

1883

445б
33

Дозволено цензурою С.-Петербургъ, 21 Окт. 1882 года.

Типографія М. Вартаняна и К°, на Троиц. пер д. № 11.

Գրադարան Ընթերցարան
Հայ Դանդաղ
Մխիթարեան
Պատկանեալ է նոցան

ՁԱՌԱՅԱՐՔԸ

«Իւրաքանչիւր ազգ, այսինքն այնպիսի ան-
«հատների մի ամբողջութիւն, որոնք կա-
«պուած են միմեանց հետ ծագման, լեզուի,
«քաղաքակրթութեան և պատմական անցեալի
«միութեամբ, իրաւունք ունի մի առանձին,
«ինքնուրոյն մարմին կազմելու»։

Градовскій, Нашіон. Вопросъ въ ист. и въ литер. С. П. 1883. ст. 10

Դեռ մի քանի տարի է, գլխաւորապէս վերջին ռուս-տաճկական պատերազմից յետոյ, երբ մեր մէջ սկսեց երևալ ազգային ինքնաճանաչութեան գաղափարը։ Մինչ այդ ժամանակ հետեւելով օտար, մեզ վրայ իշխող ազգերի օրինակին, մենք մեզ կարծում էինք իբրև մի կրօնական համայնք, քանի որ մեզ այդպէս էին ճանաչում և դեռ ճանաչել շարունակում են։ Օտարները մեզ չէին կարող ընդունել իբրև ազգայնութիւն, այսինքն իբրև մի ազգ, որ իրաւունք ունի ինքնուրոյն, անկախ գոյութիւն ունենալու, որովհետև ընդհանուր մարդկութիւնը բաղկացնող շղթայի մէջ մի քաղաքակրթական

օգակ է կազմում, քանի որ մենք ինքներս մեզ վրայ այդ գաղափարը չունէինք, քանի որ մեր մէջ չը կար ազգայնական ինքնաճանաչութիւն։

«Ազգայնութիւնը (народность) է—լ—«ը—է (քաղաքակրթական) միտք է, այսինքն «նա ենթադրում է մի որոշ ընդհանուր պատ«մական զարգացում, որի մէջ արտայայտուել «են ցեղի, ազգի հոգեկան բնութեան բոլոր «առանձնայատկութիւնները, բացի դորանից «ազգային ինքնաճանաչութեան մի զգալի աս«տիճանն է յայտնուել, այսինքն իւր հաւա«քական «ես»-ի գիտակցութիւնը։»

Град. ibid. *ст.* 21.

Այժմ երբ այդ ինքնաճանաչութիւնը մեր մէջ զարթում է, երբ օտարները անգամ սկսել են փոքր առ փոքր նկատել մեզ իբրև մի ցեղ, մի ժողովուրդ, որ ըստ իւր ընդարձակ յատկութեանց, կարող է «ազգայնութիւն» կազմել, ըմբռնելով այս խօսքը քաղաքակրթական մտքով, արդեօք հայ ժողովրդեան լուսաւոր դասը, ինտէլիգէնցիան ձգտում է այդ ինքնաճանաչութիւնը ժողովրդի մէջ ևս զարթեցնել, նորան ևս հասկացնել թէ նա կարող է ազգայնութիւն կազմել, որովհետև մինչև որ այդ ինքնաճանաչութիւնը ամբողջ, ընդհանուր ժողովուրդը չունենայ, ազգայնութեան գաղափարն ևս տե-

դի չէ կարող ունենալ։—Մեր մամուլը կարծես կամեցել է այդ դերը իր վրայ առնել. դորան ապացոյց այն երկար բանակռիւը որ մի ամբողջ տարի պարբերական մամուլը շարունակում էր, այն տաք վիճաբանութիւնը որ նա անում էր «կրօնի դէպի ազգայնութիւնը ունեցած յարաբերութեան մասին»։ Երկու հակառակ ուղղութեան մամուլը — Մեղու և Մշակ— ամբողջ ընթերցող հասարակութիւնն ևս երկու հակառակ բանակի էր բաժանել։ «Մշակ» չէր ընդունում կրօնը իբրև ազգայնութեան տարրերից մինը, իբրև ազգայնութեան հիմն, այլ ասում էր ազգայնութեան հիմն «ծագումի և լեզուի միութիւնն է», իսկ «Մեղու» հիմնուելով Հայկական եկեղեցու ազգային կեանքի վրայ ունեցած ազդեցութեան և նշանակութեան վրայ, պնդում էր թէ հայ ազգի գոյութեան յատկանիշը կրօնն է, եկեղեցին է։ Դժուար չէ հասկանալ թէ այդ վիճաբանութիւնը ինչ գործնական վնասակար հետևանք ունեցաւ։ Որովհետև մեր լրագրութեան ընթերցողները ըստ մեծի մասին միջակ դասն են կազմում, այսինքն ստորին և միջնակարգ ուսում ունեցող դասակարգը, մանաւանդ գաւառներում, ուստի «Մշակի» վարդապետութեան հետևող բանակը, հերքելով կրօնի կարևորու-

թիւնը ազգայնութեան խնդրի մէջ, իրեն ազատամիտ էր կարծում և հակառակ բանակը Ֆանատիկոս և յետադէմ, այլ հաւատալով «Մշակի» խօսքերին թէ ազգ կազմողը «ծագումի և լեզուի միութիւնն» է, կարծում էր թէ որովհետև բոլոր Հայերը ծագումով և լեզուով մի են, ուստի նոցա գոյութիւնը իբրև «ազգայնութիւն» ապահովուած է։ Այդ տեսակ մտածող ընթերցողները, որոնք, ինչպէս ասացի, իբրև հասարակ ուսման տէր, ծանօթ չեն ընդհանուր մարդկութեան զարգացման և լուսաւորութեան կանոնաւոր ընթացքի և օրէնքների հետ, հարկաւ, չէին կարող իմանալ որ դեռ «ծագման և լեզուի միութիւնը» իրաւունք չէ տալիս «ազգութիւն» կազմել։

«Եթէ Խալաթեան ապեռ-Ինանը ծագման և «լեզուի միութիւնից բացի ուրիշ ընդհանուր «բան չունենար, նա իրաւունք չունէր այդ «ազգութիւն անունը կրելու։ Բայց նա ունի «դարևոր պատմութիւն, նա ունի Դանտէ, «Մակիավէլի, Ռաֆայէլ, Միքէլ—Անջէլօ, Գա«լիլէյ, Տօրիչէլի և այլն։ Ցեղական և լեզուի «առանձնայատկութիւնները միայն ազգութեան «սաղմն և կարելիութիւնն են ցոյց տալիս։ «Այդ առանձնայատկութիւնների ոյժը և մնա«ցականութիւնը փորձվում են պատմութեան

«միջոցով, որի ընթացքում յայտնվում է, ե-
«բևան է գալիս արդեօք ցեղը ընդունակ է
«ստեղծագործութեան և ինքնուրոյն լուսաւո-
«րութեան, հետևաբար ազգութիւն կազմե-
«լուն»։

Град. ibid. *ст.* 21.

Եւ ճշմարիտ, եթէ միայն «ծագման և լե-
զուի միութիւնը» ընդունէինք ազգայնութեան
հիմն, այն ժամանակ ինչու չը պէտք է ենթա-
դրէինք, որ կալմիկ, պապուաս, թունգուս ցե-
ղերն ևս կարող են կազմել ազգութիւն։ Մարդ-
կանց մի ամբողջ խումբ կարող է միացած լի-
նել լեզուի, կրօնի, հողի ընդհանրութեամբ,
բայց դեռ ազգութիւն չը կազմել։ Այստեղ
խօսքը նախնական կամ բնական ազգութիւն-
ների մասին չէ, այլ պէտական ազգութիւն-
ների մասին։ Բնական ազգութիւն ասելով
հասկանում ենք անհատների մի այնպիսի
խումբ, որոնք միացած են նախնական պատ-
մութիւնից անկախ նշաններով և պայմաններ-
ով, մինչդեռ պետական ազգութիւնը կազ-
մվում է պատմական զարգացման ընդհանուր
ներգործութեամբ։ Բացի դորանից կուլտուրա-
կան կամ պետական ազգութիւնը կարող է
սկզբում կազմուել մի քանի բնական ազգու-
թիւններից։ Այդ բնական ազգութիւնները,

կամ աւելի ուղիղ՝ ցեղերը՝ միանալով, ձուլվում են և մի ազգայնութիւն կազմում։ Դա ազգայնութեան զարգացման առաջնական շրջաններից, ֆազիսներից մինն է։ Այդ ֆազիսը արդէն վաղուց անցել է Հայկական ազգութիւնը։ Յիշենք այն ցեղերը, լեռնական, ճենական, ալանական և այլն, որոնք փախչելով կամ պատսպարուելով Հայաստան, վերջի վերջոյ ձուլուեցան, զանգուեցան բնիկների հետ և այդ ձուլմանից, զանգուածից յառաջ եկաւ մի նոր ազգ, Հայ ազգը։

Մենք այստեղ, զանազան տարաձայնութեանց առաջը առնելու համար, հարկաւոր ենք համարում բացատրել, որ ժամանակակից գիտութիւնը և պատմութեան փիլիսոփայութիւնը ընդունում է և ամենևին հակառակ չէ զանազան ցեղերի ի մի ձուլուելուն (assimilation) եթէ այդ ցեղերից ապագայում կազմուի մի ազգութիւն ընդհանուր լեզուով, բարքի և ուրիշ կուլտուրական նշանների միութիւնով։

«Բայց գիտութիւնը, նոյն իսկ ազգայնու-«թեան պրինցիպը հակառակ է այն ձգման, «որ ցանկանում է մեքենապէս, բռնի կերպով «ի մի տէրութիւն ձուլել այն ազգութիւննե-«ը, որոնք արդէն ձևակերպուած են և որոն-

«ցից ոչ մի կերպով չէ կարելի նոր ազգութիւն «կազմել։»

Գրած. ibid. էջ 22

Օրինակ, ի հարկէ, չէ կարելի ռուս և վրացի ազգերը միացնելով, ի մի ազգ ձուլել, թէև գոքա մինչև անգամ համակրօն լինէին, որովհետև այդ ազգերից իւրաքանչիւրը ունի իր պատմական անցեալը, իր առանձին բարքը, վարքը, իր առանձին կուլտուրան։

Գլխաւոր գիտնականը և փիլիսոփայութեան մէջ «ազգայնական շարժում» անունով ուղղութեան յայտնի ներկայացուցիչը համարվում է գերմանացի փիլիսոփայ Ֆիխտէ անդրանիկը, որն առաջինն եղաւ ազգայնական կեանքի արմատական պայմանները յայտնողը և բացատրողը։ Ուստի մեր յարուցած խնդիրը աւելի պարզ կացուցանելու համար, յառաջ բերենք Ֆիխտէի վարդապետութիւնը ազգայնութեան գաղափարի մասին և այդ նպատակով դիմենք դարձեալ պրոֆէսոր Գրադովսկու օգնութեան։

«Փիլիսոփայութեան աչքում ազգութիւնը մի կենդանի, հաւաքական անձնաւորութիւն է, որ զանազանվում է ուրիշներից իր բնաւորութեան, իր մտաւոր և բարոյական ընդունակութեանց առանձին յատկանիշներով և այդ պատճառով հենց նա իրաւունք ունի անկախ

գոյութեան և զարգացման բարիքը վայելելու։ Ազգայնական առանձնայատկութեանց այդ զանազանութիւնը ընդհանուր մարդկային լուսաւորութեան կանոնաւոր ընթացքի հիմնական պայմանն է կազմում։ Իւրաքանչիւր ազգ, որքան որ մեծ լինեն նորա ընդունակութիւնները և որքան ճոխ լինեն նորա նիւթական միջոցները, կարող է ընդհանրապէս մարդկային կեանքի կողմերից միայն մինը իրագործել, լրացնել։

Զրկել մարդկութիւնը իր բազմատեսակ օրգաններից, կը նշանակէ միջոց չը տալ նորան յայտնելու ընդհանրական պատմութեան մէջ մարդկային հոգու բովանդակութեան բոլոր հարստութիւնը։ «Ընտրեալ» և «կոչեցեալ» ազգութիւնները գիտութիւնը չէ ընդունում։ Ի հարկէ գիտութիւնը և չէ հերքում համամարդկային լուսաւորութեան գաղափարը, այն մտքով, որ իւրաքանչիւր ազգութեան մտաւոր, բարոյական և տնտեսական կեանքի կարևոր արգասիքները բոլոր միւս ազգութիւնների ժառանգութիւն են դառնում։ Բայց պատմութեան փիլիսոփայութիւնը անհերքելի փաստերով ապացուցանում է, որ իւրաքանչիւր արգասիք ձեռք է բերուել և կարող է ձեռք բերուել միայն ազգայնական պատմութեան

հողի վրայ, որ Ֆիդիոյ արձանը և Պղատոնի փիլիսոփայութիւնը յունական ծնունդ էին, հռոմէական իրաւունքը հռոմէական պատմութեան արդիւնքն է, անգղիական սահմանադրութիւնը այդ ազգի ժառանգութիւնն է. սակայն այդ բոլորը արգելք չէ, որ նոքա ընդհանուր մարդկային նշանակութիւն ստանան, արուեստների, փիլիսոփայութեան և քաղաքականութեան վրայ ներգործեն, մարմնացնեն իրենց մէջ մարդու հոգևոր բնութեան այս կամ այն կողմը, դորա զարգացման մի որոշ շրջանում։

Պատմութեան փիլիսոփայութիւնը կեանքի հրաւէր է կարդում բոլոր ազգութիւնները, հրաւէր դէպի գործունէութիւն, որ հեռու մնայ թէ կոյր նմանողութիւնից և թէ սահմանափակուելուց և օտարանալուց։ Նա կանչում է իւրաքանչիւր ցեղ տալու մարդկութեան այն, ինչ որ իւր հոգևոր—բարոյական բնութեան մէջ ծածկուած է։ Ազգային «ԳՈՒՇԻՆ—ՈՒ»—ահա ինչ որ գիտութիւնը, իբրև վերջնական նպատակ ցոյց է տալիս իւրաքանչիւր ցեղին—մի նպատակ, առանց որի իրագործուել չէ կարող մարդկային սեռի կատարելութիւնը։ Սպանել ազգի ստեղծագործական ոյժը—կը նշանակէ անհատի մէջ սպա-

նել ընդունակութիւնը։ Միւս կողմից բոլոր ցեղերը հպատակեցնել «կոչեցեալ» ազգութեան ամենափրկիչ լուսաւորութեան, այդ այնքան կարստաբեր ազդեցութիւն կունենայ միջազգային կեանքի վրայ, որքան ունենում է երկրի ներքին կեանքի վրայ վարչական կենտրոնացումը, որ իրեն ամենափրկիչ է կարծում։

Հասկանալի է ուրեմն, թէ ազգայնութեան փիլիսոփայութիւնը որտեղ է որոնում իր պրինցիպի իրագործման պայմանները։ Ազգայնական նպատակը չէ կարող իրագործուել մի ազգի միւսների վրայ արտաքին կերպով, ֆիզիքապէս տիրանալովը։ Եթէ մի ազգութիւն ամբողջ տիեզերքն էլ նուաճէ, դարձեալ նա մի բառանգամ չի տեւեցնի լուսաւորութեան ընդհանուր ժառանգութեան վրայ։ Ինքնաշխատութեամբ, իր առանձնայատկութիւնների և ընդունակութիւնների զարգացնելովը, գիտակցական, հոգևոր կեանքի մէջ դաստիարակուելովը—ահա միայն այդ ճանապարհով ազգը կարող է հաստատուն տեղ բռնել լուսաւորութեան պատմութեան մէջ։ Այդ կերպով խնդիրը ֆեոդալական կերպարանքից ստանում է կոլեկտիւական, հասարակական կերպարանք։ Յեռոյ ազգերի կեանքի մէջ արտաքին և ներքին ազատութիւնը նոյնքան ստեղծագործութեան

կարևոր պայմանն է, որքան անհատի կեանքի մէջ։ Եթէ մի ազգ ներքին կերպով ազատ չէ, այսինքն եթէ նա աչքի առաջ ունենալով բարձր լուսաւորութիւնը և քաղաքակրթութիւնը (եւրոպական), ինքն իրեն գերի է շինում այդ լուսաւորութեան և ամեն ինքնուրոյն կեանքից զրկում է իրեն, կրաւոր օրինակողի դերը միայն կատարելով նա մեռցնում է որևիցէ ստեղծագործութիւն իր մէջ։ Որքան որ հանճարեղ լինի թարգմանիչը, օրինակողը, բայց ոչ մի անաչառ հասարակական կարծիք բարձր չի դասի նորան հեղինակից։ Ուստի արդեօք իւրաքանչիւր հայրենասէրի պարտքը չէ հոգալու, որ իր սեպհական հայրենիքը օտարի կարծեաց սոսկ թարգմանը և օրինակողը չը հանդիսանայ։ Օտարի կարծիքները և գաղափարները— լաւ դաստիարակական միջոց են, բայց նոքա չը պէտք է սպանեն ուսումնասիրողի ստեղծագործական ոյժը, հոգևոր ինքնուրոյնութիւնը։

«Վեր առնել ուրիշներից ինչ որ կարելի է, ազատ փոխանակութեան հիման վրայ, պահպանելով իր լիակատար ինքնուրոյնութիւնը— ահա ազգային գոյութեան պայմանը»։

Երաժ. ibid. *145—148. էջ.*

Մենք դիտմամբ յառաջ բերինք Ֆիխտէի

վարդապետութեան հիմնական սկզբունքները, որովհետև գրանով մենք պարզում ենք հայ հասարակութեան առաջ այն հայեցուածքը, տեսակէտը, որ մենք իբրև հիմն պիտի ընդունենք մեր ամբողջ աշխատութեան մէջ։

Այս ասելուց յետոյ, դառնանք մեր նպատակին, այն է «Մեղուի» և «Մշակի» քարոզած մտքերի բացատրութեան, այդ մտքերի վրայ ազգայնական տեսակէտից նայելով։ Ընթերցողը տեսաւ որ «Մշակի» միտքը թէ «ազգութիւնը» կախուած է «ծագումի և լեզուի միութիւնից» սխալ է, սխալ է, որովհետև դա շատ միակողմանի հայեցուածք է, նոյնպէս նրա երկրորդ միտքը, այն է կրօնին և հետևաբար ազգային եկեղեցուն ոչ մի նշանակութիւն չը տալը ազգայնութեան հարցի լուծման մէջ, թէ պատմութեան փիլիսոփայութեան, թէ գիտնական տեսակէտից ուղիղ չէ, ուղիղ չէ գլխաւորապէս այն պատճառով, որ ազգայնութեան գաղափարը կարող է իրագործուել միայն այն ժամանակ, երբ ցեղը, ազգը կապուած է քաղաքակրթութեան և պատմական անցեալի միութեամբ, որ ազգայնութեան գաղափարը ենթադրում է մի այնպիսի որոշ, ընդհանուր պատմական զարգացում, որի մէջ արտափայլուի ազգի հոգեկան կողմը և

ազգային ինքնաճանաչութիւն, ինքնուրոյնութիւն — ստեղծագործական ոյժ։

Եւ որովհետև հայկական — ազգային եկեղեցին հայ ազգի պատմութեան մէջ մի փառաւոր տեղ է բռնում, ցոյց է տալիս հայ ազգի հոգեկան զարգացման մի որոշ կողմը, յայտնվում է իբրև մի այնպիսի հաստատութիւն, որի մէջ աւելի քան ուրիշ տեղ արտափայլուել է ազգային ինքնաճանաչութիւնը, մի բան — կըրկնում ենք — առանց որի ազգայնութեան գաղափարի իրագործումը շատ դժուար է, որովհետև այդ եկեղեցին մի որոշ պատմական զարգացում է ցոյց տալիս, տուել է այնպիսի անձինք, ինչպէս Սահակ, Մեսրոպ, Ներսէս Մեծն, Ներսէս Կլայեցի, Ներսէս Լամբրոնացի, Խորենացի, Եղիշէ, Փարպեցի, Յովհաննէս Կաթողիկոս, Դաւիթ անյաղթ Լայլն, անձինք, որոց մէջ փայլում է ազգային հանճարը, ստեղծագործական ոյժը, ուստի չէ՞ որ հերքելով մի այդպիսի հաստատութեան ոյժը, մենք ինքներս զրկում ենք մեզ մի հաստատ իրաւունքից, որով կարելի է ապացուցանել թէ մենք ևս ունենք այն անհրաժեշտ պայմանները, որոնցով յառաջ է գալիս ազգութիւնը անկախ, ինքնուրոյն կեանքով։

Ինչպէս նկատում է ընթերցողը, մենք բո-

լորովին զանազանում ենք կրօնը ազգային եկեղեցու գաղափարից։ Հէնց «Մշակի» և մանաւանդ «Մեղուի» գլխաւոր սխալը նորա մէջն է կայանում, որ նոքա «կրօն» և «ազգային եկեղեցի» գաղափարները համանշան են շինել և այդ հանգամանքում բոլորովին մենք համակրում ենք «Մշակին» երբ նա, ընդհանուր մաքով առած, կրօնի ազատութիւն է քարոզում։ Մենք կարծում որ «Մեղուն» էս ներքին համոզմամբ հակառակ լինի կրօնի ազատութեան գաղափարին, այլ եթէ տեղ տեղ նորա մէջ երևում է մոլեռանդութիւն, այդ յառաջ է գալիս չափազանցութիւնից։ Կրկնում ենք ուրեմն, որ մենք գործ չունենք կրօնի հետ. դա խղճի ազատութեան գործ է, իսկ խղճմտանքի ազատութիւնը մարդկութեան ամենասուրբ և անեղծ իրաւունքներից մինն է։ Ոչ մի երկնային իշխանութիւն չէ կարող մուտ գործել այդ վեհարանի մէջ և այն օրէնքը, որ կը փորձէ բռնաբարել նորան, մի անյաղթելի դիմադրութեան կը հանդիպէ։ Ազատ իր հաւատոյ մէջ, մարդն ազատ է և յայտնելու նորան խօսքով, գրով՝ միայն թէ իր հաւատի դաւանութիւնով նա չը վիրաւորէ բարոյականութիւնը, որ լուսաւորեալ ազգերի հաստատակաց օրէնքն է։ Սակայն կրօնական զգացումը

բնաւ առանձին արտայայտական ցոյցերի մէջ չէ կայանում։

Բայց ուրիշ բան է ազգային եկեղեցին, մանաւանդ Հայերի վերաբերմամբ, որովհետև դա մի այնպիսի հաստատութիւն է, որ ցոլացնում է իր մէջ ազգի բազմադարեան կեանքը, այն է նորա կրած դաւերը, տանջանքը, ուրախութիւնը, մի խօսքով ազգի հոգեբանական, ուրեմն ամենակարևոր կողմը, ազգի անցեալը, պատկերը, պատմութիւնը, որի մէջ, վերջապէս, ամենից շատ է պահպանուել ազգային ինքնուրոյնութիւնը, անկախութիւնը։ Ուրեմն ով դուրս է գալիս այդ հաստատութեան սահմանից, ով որ մերժում է նորան, կը նշանակէ նա կտրում է իր բոլոր կապերը իր ազգի հետ, իր անցեալի, իր պատմութեան հետ, բայց մի մոռացէք այն մեծ և անփոփոխ տիեզերական պատմական օրէնքը, քանի որ աշխարհս գոյութիւն ունի, քանի որ գետը վերևից դէպ 'ի ներքև սլիտի հոսէ, Ղէրկոյն Ղշլա անչէալչ հէրևանդն է։

Այս մեր մտքերից հետևում է, որ մենք բոլորովին ընդդէմ չենք, եթէ Հայերի մի մասը կամենում է ուրիշ կերպ հասկանալ կրօնի մի քանի դաւանական հարցերը, որ նա ընդունում է կամ հերքում կրօնական այս ինչ

A 3963
4456
38

կամ այն ինչ վարդապետութիւնը, մի խօսքով մենք հակառակ չենք բողոքական կամ կաթոլիկ հայերին, եթէ նոքա հայկական եկեղեցու կրօնական մի քանի խնդիրների և մի քանի գաւանութեանց հետ համաձայն չեն, չեն ընդունում ծիսակատարութիւնը և այլն, այդ հանգամանքում նոքա կարող են բոլորովին «անջատուած», առանձին գաղափար ունենալ և մեր եկեղեցին բնաւ չի արգելի նորանց այդ բանը, որովհետև հայկական եկեղեցին բնաւ չէ ցոյց տուած խղճմտանքի վրայ բռնանալու ձգտում և այդ բանը նորա բնաւորութեան մէջ չը կայ. բայց որովհետև այդ կրօնական հայեցուածքների անջատումով, հերձուածով, յառաջ է գալիս և ազգային միութեան անջատում, հերձուած, որովհետև ազգի մի մասը դորանով խզում, կտրում է իր կապը իր պատմական անցեալի հետ, այն ժամանակ, ի հարկէ, անկարելի է չը բողոքել և չընդդիմանալ, նոյն իսկ գիտութեան անունով։ Ահա ինչ բանի մէջ կարելի է մեղադրել «Մշակին»։

Այժմ, այս բոլորից յետոյ, բացատրենք թէ ինչ նպատակով մենք ձեռնարկեցինք այս աշխատութիւնը։ Մեր կարծիքով ամեն մի գրականական ընդհանուր երևոյթ պէտք է ունենայ իր արդարացուցիչ գոյութեան պատճառը

կամ իր raison-d'être։ Եւ մենք ունենք այդ պատճառը։

Ի նկատի ունենալով Հայ ազգի ներկայ վիճակը, այն պայմանները, որոնցով նա շրջապատուած է, այն յոյսերը, որ նա տածում է իր ապագայ գոյութեան մասին, այն ձգտումը, որ նա ունի օրինակելու եւրոպական քաղաքակրթութիւնը, ի նկատի ունենալով այդ ազգի անցեալ պատմական կեանքը, միւս կողմից տեսնելով որ օտար ազգեր զանազան կարծիք են յայտնում Հայերի մասին, ոմանք անուանելով նորանց пронирливые, торгаши, эксплоататоры (Венюковъ, «Русская Мысль» 1882 № 3) և չը գտնելով նորանց մէջ ոչ մի գեղեցիկ ձգտում, իդեալ, անընդունակ քաղաքակրթութեան, ոմանք ընդհակառակն գուշակում են այդ ազգին մի գեղեցիկ ապագայ, արժանի և ընդունակ համարելով կուլտուրայի մինչ անգամ բարձր աստիճանին, բարձր մտաւոր զարգացման, ուստի այդ տեսակ հակառակ կարծիքներ պատճառում են զանազան տարակուսանք և կասկած ոչ միայն օտարների, նոյն իսկ իրենց Հայերի մէջ, որոնք ծանօթ չը լինելով Հայկական պատմութեան՝ ազգի ապագայի և նորա կուլտուրական կոչման վրայ անտարբեր,

սկեպտիկական աչքով են նայում, իսկ նոքա որոնք թէև հաւատում են ազգի գոյութեան և նորա ապագային, բայց այդ ազգի բոլոր փրկութիւնը եւրոպական լուսաւորութիւնը կուրօրէն ընդ օրինակելուն մէջն են գտնում, այդ բոլորը ինկատի ունենալով մեր մէջ ծագեց միտք պատմական և գիտնական փաստերի օգնութեամբ հետազօտել, և եթէ կարելի է, ապացուցանել, արդեօք հայ ազգը կարելի է նկատել իբրև ազգայնութիւն, այսինքն իբրև այնպիսի անհատների մի ամբողջութիւն, մի կենդանի հաւաքական անձնաւորութիւն, որ ըստ իւր պատմական անցեալի, ըստ իւր առանձին բնաւորութեան, ըստ իւր կուլտուրական և բարոյական ընդունակութեանց՝ իրաւունք ունենայ ինքնուրոյն, անկախ մարմին կազմելու և ինքնուրոյնապէս զարգանալու, վերջապէս իբրև մի մարմին, որ զուրկ չէ ստեղծագործական ոյժից, ուրեմն որը կարող է մարդկութեան կեանքի կողմերից մինը լրացնել, իրագործել։ Եթէ այդ խնդիրը յաջողուեց մեզ ապացուցանել, այն ժամանակ աւելի անխռով և պայծառ կերպով կը նայենք մեր ապագայի վրայ և մեր գոյութիւնը քաղաքակիրթ մարդկութեան մէջ աւելորդ չը համարելով, կը կենտրոնացնենք մեր ոյժերը որոնելու այն

բարեպատեհ պայմանները և խափանելու այն արգելառիթ խոչնդոտները, որոնց գոյութիւնը մեր ինքնուրոյն զարգացման, մեր մտաւոր և բարոյական վերածնելութեան համար անհրաժեշտ կամ վնասակար են։ Այն ժամանակ այլ ևս չենք ձգտի, չենք նկրտի մեզ ստրուկ շինել եւրոպական լուսաւորութեան և նորա կոյր օրինակողը, թարգմանը լինել, մեր գպրոցական գործը չենք շինի օտար գպրոցների պոչոդնո, մեր գրականութիւնը չենք դարձնի օտարների պէտ և անպէտ կարծեաց ասպարէզ, տեղի և անտեղի թարգմանութեանց ընդունարան, չենք մտցնի նորա մէջ բուրժուազական ոգի, այլ քաջ հասկանալով եւրոպական լուսաւորութեան բարիքը, անհրաժեշտութիւնը, փոխ կառնենք նորանից ինչ որ մեր զարգացման համար պէտք է, ինչ որ կարող է ընդհանուր մարդկութեան ժառանգութիւն համարուել, պահպանելով սակայն մեր լիակատար ինքնուրոյնութիւնը, մեր հոգևոր անկախութիւնը, ըմբռնելով բոլորը գիտակցօրէն, վերջապէս չը դառնալով օտարի կարծեաց սոսկ թարգմանիչը, այլ իրացուցիչը. և այդ ճանապարհով միայն կարելի կը լինի մեզ հաստատուն տեղ բռնել լուսաւորութեան պատմութեան մէջ։ Մեր ազգային գպրոցների վրայ կարող

ենք փորձել թէ ինչ է նշանակում կոյր ընդօրինակութիւնը։ Մեր դպրոցները միայն նորանով են հայկական, ազգային, որ այդտեղ բոլոր առարկաները հայ լեզուով են դաս տալիս. բոլոր դասագրքերը թարգմանութիւն են կամ ռուսերէնից կամ գերմաներէնից, քիչ է մնացել որ ազգային պատմութեան դասագիրքն էլ օտարներից թարգմանեն. այդ դպրոցների մէջ չը կայ ինքնուրոյն, անկախ դաստիարակութիւն, որ համապատասխանէր հայ մանկական աշխարհի առանձնայատկութեանց, բնաւորութեան, որ զարթեցնէր նորա մէջ ազգային ստեղծագործական ոգին, մի խօսքով հայ դպրոցում կրթութիւնը ազգային հողի վրայ չէ դրած, կրթութիւնը ազգայնական չէ, այլ ընդհանուր և այս բառով պէտք է հասկանալ միայն զանազան առարկաների, տեղեկութիւնների ամբարումը աշակերտի մտքի մէջ։ Եւ հետևանքը շատ զգալի է. մեր դպրոցները չեն տալիս մինչ անգամ լաւ հայագէտ, թող գործողներ, անկախ, ինքնուրոյն հոգւով գործողներ, մինչ անգամ չեն տալիս գոնէ զարգացած մարդիկ, որովհետև դպրոցը ինչ որ օրինակել է, օրինակել է առանց մարսելու, իւրացնելու և այդպէս էլ աւանդել է իր սաներին։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, խնդրի լուծումը շատ դժուար է և մեր անհատական ոյժերից շատ բարձր։ Նախ և առաջ այդպիսի մի հետազօտութեան ամենագլխաւոր աղբիւրը պիտի լինի պոպոլ-ին-ը, կամ միայն պոպոլ-ին հետազօտութիւնը կարող է մեզ մեր նպատակին հասցնել։ Այդ պատճառով մենք շատ կարևոր ենք համարում խօսել թէ ինչ է ներկայացնում մեզ հայկական պոպոլ-ին-ը։ Եթէ կամենաք ոչինչ չէ ներկայացնում նա մեզ։ Եւ ահա ինչու։

Կարդալով բոլոր հայ պատմութիւնները, մենք հասնում ենք այն եզրակացութեան, որ մեր բոլոր պատմական անձինքը, հասարակական գործիչները, օրինակ Տիգրան, Վռամշապուհ, Մեսրոպ, Վաղարշակ և այլն, ազգի կեանքի մէջ մտնող գերբնական ոյժեր էին, այնպէս որ մի պատմական անձի գործունէութիւնը ամբողջ ազգի պատմական գործունէութեան շրջանից դուրս էր։ Այդ գերբնական ոյժերը գործում էին ինքնակամ և ժողովուրդը դէպ ի նոցա բոլորովին կրաւորական դեր էր խաղում։ Վերջապէս ամեն տեղ երևում է ածութիւն, գերբնական ոյժ, ամեն տեղ ժողովրդի պատմութիւնը անհետանում է և ազգի պատմութիւնը, մի և նոյն է թէ Վաղարշակի,

Մեսրոպի պատմութիւնն է. առանց դոցա ազգը գոյութիւն չունի, միայն դոքա անգոյութիւնից դէպ՝ի գոյութիւն բերին։ Բոլորը պատահական երևոյթ է. օրինակ եթէ քրիստոնէութիւնը մուտ գործեց Հայաստան, դա այն պատճառով էր, որ մի անհատ, մի թագաւոր Աբգար կամեցաւ ընդունել այդ կրօնը, այլ այդ պատմական երևոյթը չէ բացատրվում նորանով, որ հեթանոսութիւնը արդէն սկսել էր լուծուել և կեանքը վերանորոգութիւն էր պահանջում։ Վերջապէս մինչ այժմ եղած մեր բոլոր պատմութիւնների մէջ տիրում է հակապատմական հայեցուածք։ Մեր բոլոր պատմագիրները չեն գրում ազգի, այլ զանազան դիւցազների, թագաւորների, քաջերի պատմութիւնը։ Ազգի պատմութիւնը այդտեղ չէ զարգանում յայտնի օրէնքներով, առանձին, որոշ պայմանների ազդեցութեան ներքոյ, որոնք մի ազգի կեանքը ուրիշի կեանքից որոշում են։

Ինչ ասել կուզէ, որ այժմ, երբ գիտութիւնը այնքան առաջ է գնացել, երբ ազգերի պատմական կեանքի ճիշտ հետազօտութիւնքը ապացուցանում են, որ գերբնական երևոյթները տեղի չունեն այդ կեանքի մէջ, երբ համոզուել են, որ իւրաքանչիւր պատմական

երևոյթ, որքան մեծ լինի, որքան, ըստ երևոյթին, փոխելու լինի ժողովրդի դրութիւնը, այդու ամենայնիւ ժողովրդական կեանքի նախագոյն զարգացման կարևոր հեռևանքն է, ի հարկէ պատմութեան վրայ այդ տեսակ հայեցուածքը վաղուց փոխուել է եւրոպական գրականութեան մէջ և յառաջ է եկել նոր, գիտնական հայեցուածք, նոր դպրոց։ Համեմատ այդ նոր դպրոցի ուսման, վարդապետութեան՝ նախ և առաջ պատմութիւնը պէտք է լինի ազգի, ժողովրդի կեանքի պատմութիւնը, որ իր աճման և զարգացման մէջ ենթարկվում է յայտնի, որոշ օրէնքների և հիմնուած չէ պատահական երևոյթների վրայ։ Համեմատ այդ ուսման, պատմութեան մէջ երևում են և կարող են երևալ մեծ մարդեր, հերոսներ, որոնք տալիս են իրենց աշխատանքը, բայց այդ աշխատանքի մեծութիւնը, յաջողութիւնը կախուած է ժողովրդի դրամագլխից, նորանից թէ ինչ է կուտակել ժողովուրդը իր նախընթաց կեանքից և նախընթաց աշխատանքից։ Երբ այդ ժողովրդական դրամագլխի հետ միանում է անուանի գործիչների ընդունակութիւնը և աշխատանքը, այն ժամանակ յառաջ է գալիս ժողովրդական պատմական կեանքի հզօր արտադրութիւնը։ Եթէ յայտնվում

են մեծ մարդիկ, յայտնվում են հանճարներ, դոքա ոչ թէ պատահական և ազգի կեանքի հետ կապ չունեցող երևոյթներ են, ոչ. այլ դոքա ցոյց են տալիս որ ազգը ընդունակ է արտադրելու նորանց և այդ մեծ մարդիկ, այդ հանճարները միմիայն ազգի կառուցած հոյակապ արձաններն են։ Միայն մեծ ազգը կարող է մեծ մարդ ունենալ. ճանաչելով մեծ մարդի գործունէութեան նշանակութիւնը, մենք դորանով ճանաչում ենք ազգի նշանակութիւնը։

Մի խօսքով նոր դպրոցը ուսուցանում է ազգերի զարգացումը, մտաւոր և բարոյական ոյժերի, հասկացողութիւնների յաջորդական փոփոխութիւնը, ժողովրդի յաջորդական հասակը, աճելը, ցեղական դրութիւնից հետզհետէ ազգութեան, տէրութեան փոփոխուելը։ Այդտեղ 'ի հարկէ, կարելի է վիճել այս կամ այն ձևի մասին, որով անցել է ժողովրդի կեանքը, կարելի է հերքել այս կամ այն երևոյթի նշանակութիւնը, բայց չէ կարելի հերքել, որ պատմութիւնը ժողովրդի զարգացման նկարագրութիւնն է, որ «պատմութիւնը ժողովրդական ինքնաճանաչումն է»։

Եւ արդ եթէ մենք ունենալինք այդ ուղղութեամբ, այդ նոր դպրոցի ուսման համեմատ

գրած պատմութիւն, մեր խնդիրը շատ կը հեշտանար։ Մենք կը տեսնէինք այն ժամանակ, որ եթէ հայ ազգի մէջ երևացել են մեծ մարդիկ, ուրեմն այդ ազգը ընդունակ է եղել արտադրելու նորանց և նոքա ազգի մեծութեան արձաններն են. այն ժամանակ հեշտութեամբ կը պարզուէր, կը լուծուէր մեր հարցը. «ԱՐՊԷՏ հայ ազգը էբե՞ ունի՞, ինչ-նորոյն, կոլորոկան ոյժ, կարող է գոյությի՞ն ունենալ»։—Բայց... դժբաղդաբար, այդպիսի պատմութիւն չունենք։

Զը վհատելով սակայն աշխատանքի մեծութեան առաջ, մենք ձեռնարկեցինք գործին և 1880 թուին մի ամբողջ ամիս և կէս պարապելով Պ. Բուրգի կայսերական Հասարակաց գրատան մէջ, այնուհետև երկու տարի դարձեալ երբեմն երբեմն զբաղուելով այդ հարցով, մօտ 150 աղբիւր քրքրելով, մենք եկանք այն եզրակացութեան, որ պէտք է աշխատանքը բաժանել։ Այդպէս և արինք, և մեզ կօգնեն մեր ընկերներից մի քանիսը։ Իսկ առ այժմ հրատարակելով այդ աշխատութեան յառաջաբանը և ներածութիւնը իբրև մի ամփոփ երկասիրութիւն, հարկաւոր ենք համարում յայտնել, որ համեմատ ներածութեան մէջ ընդունած յատակագծին, ամբողջ աշխա-

տութիւնը, բացի յառաջաբանից և ներածութիւնից, բաժանուելու է հետևեալ երեք մասերի։

Ա.— ՀՈՂ։— Հին Հայաստանի կլիման, հողը, արտադրութիւնը, աշխարհագրական դրութիւնը, տնտեսական վիճակը. զանազան դասակարգերի գոյութիւնը, ծագումը, նոցա առ միմեանս ունեցած յարաբերութիւնը։ Գաղթականութիւնը, և այլն։

Բ.— ԼԵԶՈՒ։ Լեզուի ծագումը ընդհանրապէս, նորա աճման օրէնքները։ Գրութեան պատմութիւնը։ Գրականութիւնը ընդհանրապէս։ Հայկական լեզուն, գրութիւնը և գրականութիւնը թէ հին, թէ նոր։ Գիտութիւնը Հայերի մէջ։ Ազգային ստեղծագործական ոյժը։ Ժամանակակից հայ գրականութիւնը և մամուլը։— Մեր գրողները և նոցա ուղղութիւնը։ Զանազան գրականական ուղղութիւններ և այլն և այլն։ Գպրոց։ Ազ-

գայլին դպրոցը 'ի հնումն և 'ի նորումս։

Գ.— ԿՐՕՆ։ Կրօնի մասին ընդհանրապէս։ Նորա դերը։ Ազգային եկեղեցի, նորա պատմութիւնը, ինքնուրոյն, անկախ կեանքի նշանակութիւնը։—Վերանորոգութեան գաղափարը։

Յոյս ունենք, որ մեր աշխատութիւնը չը պիտի նկատուի, իբրև մի աւելորդ կերակուր հայ գրականութեան վտիտ տրապեզի վրայ։

Հ. Ա. ԱԹԱՖԵԼԵԱՆՑ.

1 Հոկտ. 1882 թ. ին
Ս. Պ. ԲՈՒՐԳ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Մարդկութեան պատմական կեանքի ընթացքում, մարդկային միտքը և կեանքը բիւրաւոր խնդիրներ են ծնուցել, որոնք կամ արդէն վճռուած, լուծուած են, կամ մոռացուած կամ դեռ մինչ այսօր պատասխանի և լուծման են սպասում։ Իւրաքանչիւր պատմական շրջան ունեցած է իր առանձին, իրեն յատկանիշ խնդիրներ, որոնք մի առանձին տիպ են ընծայած այդ շրջանին, յուզած են մտքերը, պատճառ են եղած բազմաթիւ յեղափոխութեանց, խռովութեանց, կերպարանափոխած են հասարակական կազմուածքը, նորանոր ձգտումներ են յառաջացրած, արիւնահեղ պատերազմների պատճառ են դարձած։ Հին պատմութեան—յունական և հռոմէական աշխարհների — յատկանիշ ընաւորութիւնն էր սէր, ձգտում դէպի գեղարուեստական խնդիրները։ Միջին դարերը ներկայացնում են մեզ մի այն-

պիսի պատմական շրջան, երբ հետամուտ էին ամեն բան դաւանականացնելու և ամեն բանի մէջ հայեցողական փիլիսոփայութիւն մտցնելու։ Դաւանական հարցերը ոչ թէ միայն կրօնական նեղ շրջանի, այլ և հասարակական և ընկերական կեանքի մէջ առաջնակարգ դեր էին խաղում։ Միջին դարերի կրօնական շարժումը թափանցում էր հասարակական կեանքի մինչ անգամ ամենաածածուկ խորշերի մէջ. նա ամեն գործունէութեան, թէ մտաւոր, թէ բարոյական և թէ քաղաքական՝ գլխաւոր լծակն էր։ Բայց անցան միջին դարերը, անցաւ և կրօնական տիրապետութիւնը և դաւանական ձգտումները, կրօնական համոզումները տեղիք տուին ուրիշ ձգտումների և համոզմանց, յառաջ եկաւ մի նոր շարժում, որ նորագոյն լուսաւորութեան հիմն դրեց։ Մարդկային միտքը ազատուելով միջնադարեան կրօնա—դաւանական ճնշումից, իր բոլոր ոյժը բնութիւնը ուսումնասիրելուն և իրականութիւնը հետազօտելուն վրայ դրաւ։ Այդտեղ նա գտաւ կենսատու աղբիւր, որով կարող էր իր ոյժը նորոգել, թարմացնել. այդ աղբիւրը ոչ թէ ամեն տեղ նոր կեանք, նոր զօրութիւն սփռէր։ Եւ այնուհետև բնութեան ուսումնասիրութիւնը ամեն իմացողութեան

միակ բէալական հիմն դարձաւ։ Նա ծնեց և մշակեց այնպիսի էական գիտութիւններ, որոնք ժամանակակից մարդկութեան գոռոզութիւնն և փառքն են կազմում, և որոնք նպաստեցին նորա տնտեսական և մտաւոր բարգաւաճման։ Ինչ չափով, ինչ աստիճանով որ արտաքին աշխարհը -բնութիւնը- ուսումնասիրութեան և քննութեան նիւթ դարձաւ, համաչափ և զուգէ աւելի ուժեղ կերպով անցեալ դարի վերջերից սկսած գիտութեան հետազօտութեան նիւթ են դարձել և մարդկային հասարակութիւնը, հասարակական երեւոյթները, ուստի և այն բազմաթիւ խնդիրների վրայ, որոնք ծագել են զանազան դարերում, անցեալ դարի վերջերից յաւելացած է և մի շարք ուրիշ խնդիրների, այսպէս կոչուած սոցիալական և տնտեսական խնդիրները։

Ժամանակակից մարդկային հասարակութեան ազատամտական շարժումը, նորա մէջ ծագած, բայց քաղաքական մասին դեռ լուծման կարօտ սոցիալական և տնտեսական խնդիրները, ժթ. դարի յատկանիշ բնաւորութիւնն են կազմում։ Ինչպէս առաջ, հին պատմական կեանքում կրօնական հայեցուածքները ամբողջապէս կլանում էին ընկերական կեանքի բոլոր միւս կող-

մերը, նոյնպէս և այժմ ընկերաբանական և տնտեսական խնդիրները իրենց մէջ ամփոփում են մարդկային և հասարակական զարգացման համարեա բոլոր կողմերը։ Ինչպէս միջին դարերում Արևմուտքի քաղաքակրթական ազգերի մտաւոր և հասարակական գործունէութեան գլխաւոր լծակը կրօնական ձգտումներ էին և համոզումները, որոնք թէև նորագոյն կրթութեան հիմն դրին, բայց արիւնահեղ պատերազմների, քաղաքական դղրդումների պատճառ դարձան, նոյնպէս և անցեալ դարի երկրորդ կիսից սկսած նոյն նշանակութիւնը սկսած են ստանալ և նոյն դերը սկսած են խաղալ ընկերաբանական ձգտումները և համոզումները։ Այդ ձգտումները և համոզումները, իբրև մի աւերիչ ոյժ, հեղեղի նման սկսեցին դուրս թափուել ֆրանսիական յեղափոխութեան ժամանակ և այժմ ևս, նոյն ընդհանուր, եթէ ոչ նոյնաչափ արագավէժ հոսանքով, շարունակում են հոսել։ Ինչպէս կրօնական համոզմունքները պատճառում էին աններողամտութիւն, արիւնհեղութիւն, երկպառակութիւն, նոյնպէս և սոցիալական ձգտումները և խնդիրները, իբրև նոր գաղափարներ, որոնք հակառակ են ժողովրդի ներկայ տնտեսական դրութեան և հասարակա-

կան կազմակերպութեան, մինչ այժմ ծառայած են և պիտի ծառայեն իբրև ազբիւր միջազգային թշնամութեան, արիւնհեղութեան, իբրև ազբիւր քաղաքական ֆանատիկոսութեան, աննեբողամտութեան։ Ինչ է այն ահագին կաղ և կռիւը, որ Անգլիայում աշխատաւոր դասը ունի գործարանատէրերի հետ, ինչ է այն ատելութեան պատճառը, որ ստորին - դեմոկրատիկական դասը տածում է դէպի վերին— արիստոկրատիկական դասը։ Որի՞ ազդեցութեան տակ «Հասարակական կարծիք» կոչուածը, «ժողովրդական» խօսքը հետզհետէ այնքան հսկայական նշանակութիւն է ստանում, վերջապէս որի՞ ազդեցութեան տակ այսօր քարոզվում է բոլոր մարդկանց հաւասարութիւն (իրաւանց հաւասարութիւն, անձնական ազատութիւն),— եթէ ոչ սոցիալական խնդիրները։ Ահա՛ ի թիւս այն մի քանի փոթորկալից և ալմկալից խնդիրների, որոնք կազմում են ժամանակակից եւրոպական հասարակութեան սոցիալական շարժման յատկանիշը, գլխաւոր տեղը վերապահուած է աշխատանքի դէպի դրամագլուխը ունեցած յարաբերութեան խնդրին, աշխատաւորների խնդրին, ազգայնութեան խնդրին և այլն։

Այդ սպառնալից, կնճռոտ և դեռ չը լու-

ծուած խնդիրները, ինչպէս ասացինք, ժամանակակից հասարակութեան ընդհանուր ընկերաբանական շարժման անմիջական ծնունդն են կազմում։ Այդպէս ընդունելով, կարելի է այն ժամանակ բացատրել թէ այժմ, երբ հասարակութեան զարգացումը այնքան առաջ է ընթացած, կրօնական ձգտումները ինչ տեղ պիտի բռնեն։ Մենք ասացինք, թէ հին ժամանակներում բոլոր սոցիալական խնդիրները և նոյն իսկ մարդկութեան մասնաւոր շարժումը անքակելի կապերով շղթայուած էին կրօնական համոզմանց հետ, այնպէս որ նոյն իսկ քրէական և քաղաքային օրէնքները կրօնի դաւանութեան մասն էին կազմում, ինչպէս եգիպտացւոց, հնդկացւոց, պարսից մէջ։ Կարող ենք ասել, որ այժմ ևս, այս սոցիալականութեան դարում, այն կապը, որ կեանքի ընկերական կողմը ունի և պիտի ունենայ կրօնականին հետ չէ լուծված և բոլորովին ևս չէ կարող լուծուել, քանի որում այդ կապը բնական է։ Սակայն ժամանակակից սոցիալական շարժումը այն խորին տարբերութիւնը ունի միջնադարեան կրօնական շարժումից, որ առաջ կրօնական հայեցուածքները ամբողջապէս կլանում էին հասարակական կեանքի զարգացման բոլոր միւս կողմերը, իսկ այժմ

այդ զարգացման զանազան կողմերը որոշուած են, ջոկուած, ուրոյն ուրոյն բաժանուած, և ի հարկէ այդ կողմերի մէջ կրօնական կողմն ևս իր արժանավայել տեղն ունի, ինչպէս ունի քաղաքականը, մտաւորը, տնտեսականը։

Սոցիալական խնդիրները լուծելու համար ժամանակակից հասարակութիւնը երկու ճանապարհ է ընտրել—պրակտիկայի, կեանքի ճանապարհը և գիտութեան, տէորիայի ճանապարհը։ Այդ խնդիրներից ոմանք հետզհետէ լուծուելու և իրականանալու վրայ են թէ այն և թէ այս ճանապարհով, իսկ դոցա մէջ մինը, որ սաստիկ կերպով հետաքրքրում է ժամանակակից հասարակութիւնը և իշխում է մտքերի վրայ—այն է «ազգայնութեան» խնդիրը, որի զարգացման վերջին դիպուածները (բուլգարական, սերբական ազգերի անկախութիւնը) մի հսկայական զարկ տուին, պէտք է այս հեղինակութեան նիւթը լինի, նախ ընդհանրապէս մշակուելով և ապա մասնաւորացնուելով իբրև Հայկական ազգայնութեան խնդիր։

ԱԶԳԱՅՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ԵՒ ՊՐԻՆՑԻՊՆԵՐԸ։

Ազգայնութեան պրինցիպը ԺԹ. դարի ամենաթանկագին գիւտերից և սեփականութիւններից մին է։ Ոչ մի դար չէ ընծայած այդ պրինցիպին մի այնպիսի զարկ, մի այնպիսի ելեքտրական ցնցում, ինչպէս ներկայ դարը։ Պէտք է ասել որ նոյն իսկ «ազգայնո-ՐՆ-Ն» բառը նոր հնարած բառ է այս դարում և այդ բառը նախնիներին ամենևին յայտնի չէր, ինչպէս «ազգութիւն» բառը Հայերի մէջ միայն նոր ժամանակներում սովորական բառ է դարձել*)։ Մեզանից առաջ այդ խօսքի տեղ երկու տերմին էին գործածում «ազգ» և «տէրութիւն», և այդ գաղափարները իրարից տարբեր մտքով էին հասկացվում։

Ազգը տէրութիւնից մի տարբեր, որոշ մարմին էր կազմում, իսկ տէրութեան հետ ունեցած կապը միայն նրանով էր յայտնվում, որ նա կառավարում էր նորան։ Մեր դարը, հնարելով «ազգայնութեան» գաղափարը, կա-

---

*) Որքան յայտնի է մեզ «ազգութիւն» բառը Տաճկաստանի մէջ առաջին անգամ իւր բոլոր նշանակութեամբ սկսած է քարոզել Խրիմեան Հայրիկ։

մեցած է այդ բառով 'ի մի ձուլել ազգ և տէրութիւն գաղափարները։ Այժմ «Ազգ» ասելով հասկացվում է մի այնպիսի մարմին, որ հիմնուած է ՀԵՂԻՆ և ԺԱՓՈՒՆ ՄԻՈՒԹԵԱՆ վրայ։ Այս տեսակէտից նայելով ամեն ժողովուրդ կամ ազգ չէ կարող ազգայնութիւն կազմել և դորա համար հարկաւոր են մի քանի կարևոր պայմաններ, առանց որոց իւրաքանչիւր ազգ կամ ժողովուրդ իրաւունք չունի աշխարհիս երեսին գոյութիւն ունենալու իբրև «ազգայնութիւն», այսինքն իբրև առանձին քաղաքակրթական մարմին բոլոր միւս քաղաքակրթական մարմինների հետ միասին, եթէ ոչ նա պէտք է ծառայէ իբրև էտնոգրաֆիական նիւթ, իբրև ցեղ, որը, շուտ կամ ուշ, պէտք է ձուլուի և զանգուի ազգայնական մարմինների հետ։

ԸՐԴ, ՈՐՈՆՔ ԵՆ ԱՅԴ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Այս շտապողական հարցին պատասխանելից առաջ, կը ցանկայինք ցոյց տալ թէ ազգայնութեան պրինցիպը և գաղափարը էքսակլյուզիվ կամ գիտնական իդէալի ծնունդ չէ, թէև այդ գաղափարի ծնունդը միայն ժթ. դարին

ենք պարտաւոր։ Թէ ազգայնութեան գաղափարը մինչև անգամ գործնականապէս իրականացած և կեանքից սրբագործուած է, դորան ապացոյց՝ այն, որ ոչ մի դար դեռ չէ տեսած ազգայնութեան ազատութեան այնքան յաջող փորձեր, ինչ պէս մեր դարը։ Յունաստան, Բելգիա, Իտալիա, Սերբիա, Կարատաղ, Բուլգարիա, Բոլզարիա, և ով գիտէ գուցէ շուտով թուրքաց —Հայաստան— ահա փառաւոր ապացոյցներ թէ մինչ որ ատրճան ազգայնութեան գաղափարը ներկայ դարի համար միս և արիւն է դարձած։

Սակայն չը նայելով այդ համատարած գաղափարի ընդունման, կան և բազմաթիւ օրինակներ, որտեղ տեսնում ենք, որ նա բոլորովին չէ հասկացուած կամ ծուռ կերպով է մեկնաբանուած։ Ինչպէս ամեն մարդկային իդէա, նմանապէս և ազգայնութեան իդէան շատ ծուռ մեկնութիւնների տեղիք է տուած, որով պատճառ է եղած որ շատերը նրա հետ միացրած են շահադիտական նպատակներ և նեղասրտութիւն։ Այդ ինքն ըստ ինքեան սուրբ և մեծ գաղափարը, պատճառ է եղած շատերին ցոյց տալ մի այնպիսի կոյր ֆանատիկոսութիւն, աններողամտութիւն, որի նմանը գուցէ միջնադարեան կրօնական գաղափար-

ներբ ևս չեն ընծայած։ Եւ ճշմարիտ մենք շատ հակասութիւններ ենք տեսնում։ Այն գերմանացիք, Ալլէմանի այն հայրենասէր որդիքը, որոնք ոգևորուած՝ ազգայնութեան գաղափարով, ձգտում էին համայն Գերմանիայի միութեան, որոնք երազում էին տեսնել իրենց Հայրենիքը 'ի մի հոգի և 'ի մի մարմին, մի ձգտմամբ և մի ուղղութեամբ այդ «ազգայնութիւն» գաղափարը քարոզողները չամաչեցին նորա պրինցիպներին հակառակ գործել. նոքա ամեն տեսակ անտրամաբանական ջանքեր արին խլել Էլզաս, Լօթարինգիան և կողոպտել թշուառ Դանիան. այն ազատասէր հունգարացիք, որոնք իրենց ազգայնութեան պաշտպանութեան և անկախութեան համար հիանալի քաջութիւններ էին գործում և արիւն էին թափում, սակայն այդ ազնիւ գործը նսեմացրին, երբ վայրենի կատաղութեամբ ճնշում էին Սլավերին «od majoram gloriam»—'ի փառս և 'ի պարծանս—հունգարական մեծութեան։ Մի խօսքով, ԺԹ. դարու ազատամիտ փիլիսոփայութիւնը քարոզելով ազգայնութեան գաղափարը և բացատրելով նորա պրինցիպները ընդհանրացրած է նորան, ուստի և ամեն ազգ որ նկատած է իւր մէջ այն պայմանները, որոնցով կարող է իրա-

գործել իւր վերաբերմամբ այդ գաղափարը, սկսել է գոռալ, գոչել և ձգտել դէպի նորան, սակայն այդ ազգերից շատերը այնքան ինքնասէր և նեղսասիրտ են հանդիսացած, որ ազգայնութեան գաղափարի վարդապետութիւնը միայն իրենց համար են ստեղծեալ համարում, մտածել անգամ չեն կամենում, թէ քանի որ ուղիղ են ազգայնութեան պրինցիպները, ուրեմն իւր դիմացի ազգն ևս իրաւունք ունի օգուտ քաղելու նրանցից։ Այն որ իւր վերաբերութեամբ շատ հասկանալի և կարելի է նկատում, ուրիշի վերաբերութեամբ անկարելի է քարոզում։ Այդ է պատճառ, որ մի ազգ, որ վառուած է հայրենասիրութեան կրակով, ուրիշի վերաբերմամբ բռնակալ է հանդիսանում, և հայրենասէրը անարդարասէր է դառնում։ Քանի որ յոյները հեծում էին թուրքաց լծի տակ, նոքա ԺԹ. դարի քարոզած վարդապետութեանը վերայ յենլով՝ աղաղակում էին, յանդիմանում էին, նախատում էին ամբողջ Եւրոպան, թէ ինչու իրենց ազատելու հակում չունէ, ըստ որում իրենք ունենալով ազգայնութեան պրինցիպի իրագործման կարևոր պայմանները, ամենայն իրաւունք ունեն պահանջելու այդ օգնութիւնը, բայց երբ Եւրոպան ազատեց նրանց, այդ մարդիկ,

որոնք գայրանում էին Եւրոպայի անիրաւութեան դէմ, չը կարողացան հանդուրժել, երբ բոլգարները և սերբերը միևնոյն գաղափարով համակուած՝ տենչում էին իրենց ազգային անկախ եկեղեցին ունենալ, նոքա ուրախութեամբ պիտի տեսնէին ամբողջ բոլգարական ազգի ջնջումը, և դեռ այսօր ևս վրդովում են, երբ ուրիշ ազգեր, օրինակ Հայեր ձգտում են դէպի այն ցանկալի նպատակը, առ որն իրենք 20-ական թուականներին էին ձգտում և բարկանում են, երբ Հայերը փափագում են բարձրացնել այն աղաղակը, ինչ որ իրենք էին բարձրացնում Եւրոպայի դէմ։

Ազգայնութեան գաղափարի վարդապետութիւնը զանազան ֆազիսներ, շրջաններ է ունեցել, իւրաքանչիւր շրջան իւր ցանկացածի համեմատ գոյն և ձև է տուել ազգայնութեան և ժողովրդականութեան գաղափարին, համարեա ամենքը իրրև հիմն ընդունել են լեզուն, բայց այդ պայմանի հետ կցել են և մի ուրիշ տարր։ Ոմանք ազգայնութեան գաղափարը յօդել և կցել են կրօնի հետ, այլք— կառավարչական ձևի հետ, մի մասն ևս, ազգայնութեան գաղափարը հերքելով, նորա փոխարէն ցոյց են տուել մի անտարբեր սէր դէպի մարդկութիւնը և քարոզել են կոսմոպոլի-

տիկական վարդապետութիւնը։ Սակայն ժամանակակից գիտութիւնը որոշ կերպով բացատրել է ազգայնութեան գաղափարը, (տե՛ս յառաջաբան) և ցոյց է տուել այն պայմանները, որոնց միջոցով ազգայնութեան գաղափարը գործնականապէս կարող է իրագործուիլ, և արդէն, ինչպէս տեսանք, շատ տեղեր էս իրագործուել է։

Այժմ գանք բացատրելու թէ որո՞նք են այդ էական պայմանները, այսինքն վերլուծենք ազգայնութեան գաղափարը իւր բաղկացուցիչ տարերքին։

Առաջին պայմանը, տարրը, առանց որոյ անկարելի է որ և իցէ ազգայնութիւն, այդ հողն է։ Առանց որոշ երկրի, հողի անկարելի է ոչ թէ միայն անկախութիւն, այլ և մի հասարակ ինքնավարութիւն։ Բնական և սոցիալական գիտութիւնները այնքան զարգացել են և նոցա մէջ եղած կապը այնքան որոշուել է, որ այժմ անհերքելի փաստ է դարձել՝ թէ մարդկային այս կամ այն հասարակութիւնը, այս կամ այն տէրութիւնը, իրական գործարանաւորութիւններ են, որոնք ապրում են միևնոյն կեանքով, որով ապրում են բնութեան մնացեալ գործարանաւորութիւնները։ Ուրեմն ազգայնութիւնը, որ նոյնպէս

մի մարդկային հասարակութիւն է, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի իրական գործարանաւորութիւն և որովհետև իւրաքանչիւր գործարանաւորութիւն միայն մի յայտնի, որոշ հողի վերայ ծնվում, բուսնում, աճում, սնանում, մեծանում և մեռնում է, ուստի և ազգայնութիւնը նոյնպէս որոշ հողի վերայ կարող է ծնուել, աճել, զարգանալ։ Ուրեմն հողը, հայրենիքը, ազգայնութեան ամենաէական պայմաններից մինն է։ Եթէ սրևիցէ մի Հայրենասէր ջանք է անում ազգային անկախութիւն ձեռք բերել, նա այդ անում է միայն իւր Հայրենակիցների համար, որոնք մի որոշ տեղ համախմբուած են։

Մաձինի և Գարիբալդի ցանկանում էին ազգայնութեան միութիւն միայն այն Իտալացիների համար, որոնք Ալպից մինչև Կալաբրի տարածութեան վերայ էին բնակում։—

Հայերը ցանկանում են ինքնավարութիւն միայն այն Հայերի համար, որոնք բնակվում են բուն Հայաստանում։ Ցանկանալ ինքնակախութիւն ձեռք բերել Ռուսիոյ, Հնդկաստանի, Պարսկաստանի, Եւրոպայի Հայերի համար, ցնորք կը լինէր (ուրիշ բան է տեղական ինքնավարութիւնը)։ Գերմանացիների հոգը չէ այն իրենց միլիոնաւոր Հայրենակիցները, որոնք

Միացեալ Նահանգներումն են ապրում։ Առանց հողի անկարելի է հայրենասիրութիւն, դորա ապացոյցը պատմութիւնը և նոյն իսկ այդ զգացումը։ Հրէաների հայրենասիրութիւնը անկարելի է, քանի որ մի կտոր հող չունեն։ Ով որ մտածում է քաղաքական անկախութեան վերայ, նա պէտք է դորան հարկաւոր բէալական հիմունքը ունենայ—հող ունենայ։

ԼԵԶՈՒ

Հողից յետո ազգայնութեան գաղափարի ամենակարևոր տարրը, էական պայմաններից մինը—լեզուն է։ Ընդհանուր լեզու, ընդհանուր գրականութիւն, ուրեմն և ընդհանուր կուլտուրա—մի այսպիսի գեղեցիկ հողի վերայ խիստ հաստատուն բան կարելի է շինել, շատերին կարելի է գրաւել։ Ահա այդ հողի ինչպէս և որոշ տէրրիտորիայի վերայ կարելի եղաւ Գերմանական միութիւնը։ Այդ հողին վերայ մեծն Դանտէ՝—իտալական հայրենասիրութեան միացուցիչ սկզբունքի տեղ էր ծառայում, այդ հողի վերայ սկսեց սլավոնական վերածնելութիւնը, ինչպէս և բոլգարական, երբ սկսեցին զանազան սլավոնական բարբառներ մշակել և միացնել։ Այդ հողին վերայ

պիտի սկսուի, ինչպէս շուտով կը տեսնենք, և Հայկական վերածնելութիւնը և եթէ Հայկական հայրենասիրութիւնը ունի բոլոր Հայերին ընդհանուր լեզու—նա, անկասկած, իրաւունք ունի գոյութիւն ունենալու, չը նայելով որ շատերը մերժում են և անկարելի են համարում այդ զգացումը Հայերի համար։ Հրէաները չունեն իրենց ընդհանուր լեզու. Ֆրանսիայինը – Ֆրանսերէն են խօսում, Գերմանիայինը – գերմաներէն, Անգղիայինը—անգղիերէն, և այլն և այլն. ահա ի՞նչի համար Եւրոպան ծաղրելի է համարում նրանց հայրենասիրութիւնը։ Ընդհանուր լեզու ասելով պէտք չէ սակայն հասկանալ մի այնպիսի լեզու, որ միայն առօրեայ կեանքի պիտոյքները արտայայտելու ընդունակ է և որով չէ կարելի մի վերացական միտք յայտնել։ Ճշմարիտ է հրէաները ունեն մի ընդհանուր լեզու (հին եբրայականը), ինչպէս և Հայերը—(հին գրաբառ լեզուն) որով գրուած են կրօնական և պատմական գրքերը (մեր գրաբառը նոյն նշանակութիւնը չունի, ինչ որ հին եբրայականը)։ Բայց այդ լեզուն մեռեալ է, շատ տարիներ է պահանջում սովորելու։ Ո՛չ մի տեղ մեռեալ լեզուի միջոցով ազգային միութիւն չէ եղել։ Լատինարէն լեզուն միջին դարերում

ընդհանրական լեզու էր, բայց այդ ժամանակ ամենից քիչ միութիւն կար։

ԿՐՕՆ

Երրորդ կարևոր տարրը, պայմանը ազգայնութեան գաղափարի, մի պայման, որ տեսականապէս ոչ մի դեր չը պիտի խաղայ, բայց պատմականապէս — գործնականապէս մեծ դեր է խաղացել և պիտի խաղայ — դա կրօնքն է։ Ի հարկէ, չէ կարելի անպատճառ ասել, որ բոլոր ազգայնական ձգտումների մէջ կրօնը նշանաւոր դեր է խաղացել։ Իտալացիք և Աւստրիացիք համակրօն էին, բայց ամենամեծ թշնամութիւն էր տիրում նրանց մէջ. այսօր ճնշուած չեխերը, սլավոնականները և ֆրվանդիները մի և նոյն կրօնքն են դաւանում՝ ինչ որ ճնշող Հունգարացիք, բայց և շատ ազգային շարժումների մէջ հայերի հաւատը նոյնչափ լծունգ է եղել որդիների համար, ինչպէս և հայերի հոգն և լեզուն։ Այսօր աշխարհիս երեսին միակ կապը, որ միացնում է հրէաներին, պահում է նրանց ազգայնութիւնը — դա կրօնքն է։ Առանց Հրէական կրօնի, հրէականութիւնը անհերևակայելի։ Կրօնը և միայն կրօնը պահել է Հրէաներին, չը նայելով

սարսափելի հալածանքներին և հազարամեայ թափառումներին։ Երբ հրէան կորցնում է հաւատքը, նա այլ ևս հրէայ չէ և երկրորդ կամ երրորդ սերունդի ժամանակ հրէական ծագումի հետքն անգամ կորչում է, 'ի հարկէ ֆիզիոլոգիական ծագումը դեռ շատ տևում է, բայց կեանքի մէջ այն հրէան, որ իւր հայրերի հաւատը կորցրել է, շրջապատող տարրի հետ ձուլվում, խառնվում, անհետանում է։ Հեղինակութեանս ընթացքում կը բացատրուի նոյնպէս, թէ արդեօք հայ պատմական կեանքի մէջ ևս կրօնը համազօր նշանակութիւն է ունեցել, և եթէ ունեցել է, այժմ ևս ունի և ապագայում ևս պէտք է ունենայ։

Ուրեմն հասկանալի է, թէ այսօր միակ հողը որի վերայ կարող է ծնել հրէական հայրենասիրութիւնը, դա կրօնքն է։ Եթէ այդպէս է, ապա ուրեմն բացատրելի է թէ ինչու հրէայ հայրենասէրները, շատ անգամ կրթուած և լուսաւորուած մարդիկ՝ խիստ հետևող են տալմուդականութեան։ Դա հասկանալի է, դա ունի իւր raison d'être։ Այդպիսիների կարծիքով ճշմարիտ ազգասէրը նա է, ով որ լաւ Հրէայ է, այսինքն մովսիսականութեան հարազատ զաւակ է, եթէ ոչ նորա ազգասիրութիւնը հիմն չունենալով, դատարկ ձայն է,

որի տակ ոչ մի բովանդակութիւն չը կայ։

Մենք յառաջ բերենք գիտութեան վերջին խօսքը ազգայնութեան գաղափարի իրագործման մասին։ Գալով այն հանգամանքին, թէ ի՞նչ է ժամանակակից գիտութեան խօսքը այն վարդապետութեան մասին, որ ազգայնութեան գաղափարը հերքելով նորա տեղ անխնայ սէր է քարոզում դէպի համայն մարդկութիւնը, մենք կամենում ենք այդ մասին մի երկու խօսք ասել, և այդ այն պատճառով, որ առաջին՝ այդ խնդրին այլ ևս չը պիտի վերադառնանք, և երկրորդ՝ ինչպէս փորձով տեսած ենք և գիտենք, մեր ուսանող երիտասարդութեան մի մասը այդ գաղափարի տակ քօղարկուած, նորանով համակուած, հեռացնում է իրանից ազգային ոգի և իցէ գործունէութիւն։—

Այդ վարդապետութիւնը, ինչպէս յիշեցինք, կոչվում է կոսմոպոլիտիզմ։ Սակայն ժամանակակից գիտութեան աչքին՝ կոսմոպոլիտիկական իդէան ծիծաղելի է համարվում և այն նշանակութիւնը ունի, ինչ որ Գերմանացիք ասում են ein übe rmundoner standpunkt, այսինքն, մի բան, որ յանձնուած է արխիվին։ Այժմ շատ ապացոյցներ կան համոզվելու վերջապէս, որ համաշխարհային քաղաքացիները (կոսմոպո-

լիտները) իրօք ոչ ոքի չեն սիրում և ոչ ոքից չեն սիրուած։ Մեր ժամանակում ամեն մարդ պէտք է մի որոշ հողի վերայ կանգնի, մի կողմի յարի, մի բանի կպնի և նորա ուրախութիւններին ու ցաւերին մասնակցի։

Մենք ասացինք, որ մեր դարը ազգայնական ձգտումների դար է։ Այդ ձգտումները ամենահզօր կերպով յայտնուեցին մանաւանդ վերջին ժամանակներս։ Հանդէս դուրս եկին բազմաթիւ ազգեր իրենց ազգայնութեան խնդիրներով և կարծեցին, որ այդ խնդիրները պէտք է լուծում ստանան։ Մի քանիսները ստացան այդ ցանկալի լուծումը, սակայն այն ստուգութիւնը, որով ազգայնութեան գաղափարը կեանքի մէջ մուտ գործելով, իրականանում էր, մի հզօր զարկ, մի ուժգին հարուած տուաւ այդ գաղափարի ծագման և այն ազգերի մէջ, ուր նա թմրած, համարեա անծանօթ՝ դեռ յայտնուել չէր համարձակվում։ Եւ ճշմարիտ, վերջին պատերազմը, Սլավոնական ազգերի ազատութիւնը, ահա այն պայմանները, որոնք արագացրին այն խնդրի ծնունդը, որ վաղ ուշ, պատմական օրէնքների հիման համեմատ, պէտք է ծագէր։ Եւ ահա ծագեց հայկական անունով խնդիր, հնչեց հայկական «ազգայնութիւն» բառը։ Սակայն

այդ խնդիրը միւսների նման լուծում չը ստացաւ և դեռ յայտնի չէ, թէ ե՞րբ և կամ ինչ տեսակ կը ստանայ, դա շատ բնական է, ըստ որում որ և իցէ մի սոցիալական խնդիր, մինչև յայտնի ֆազիսներ չը կրէ, յայտնի շրջաններից անցնելով չը հասունանայ, չէ կարող լուծուել, իրագործուել։ Այժմ կարող ենք ասել Հայկական խնդիրը իւր հասունութեան շրջանի մէջ է մտել, ուստի և մօտացել իւր իրագործման կէտին, թէև այդ հասունութիւնը ձեռք է բերուած ամենաթանգ գնով, Հայ արիւնի, սպանման, կոտորածի գնով։ Արդ այսպիսի մի ճգնալից և տագնապալից ժամանակում, երբ պէտք է մեր ազգային արժանաւորութիւնը հասկանալ և նորան բարձր պահել, արդեօք ամենքը համոզուած են և հաւատում են, թէ Հայ ազգը կարող է ազգայնութիւն կազմել, այսինքն ինքնուրոյն քաղաքական մարմին և այդ մարմինը՝ որպէս զի առողջ լինի, անպատճառ հարկաւոր է, որ նորա բոլոր մասնիկները — ը—ա. կամ. ֆ. Հայերը — ի մի համախմբուին, թէ դեռ կասկածանքի հոգին տիրում է և ճշմարիտ է արդեօք Հային պէտք է անպատճառ լուսաւորչական եկեղեցւոյ անդամ լինել։

Արդէն յառաջաբանի և ներածութեանս բո-

վանդակութիւնից բացորոշ է, թէ ի՞նչ է այս հեղինակութեան նպատակը։ Նորա նպատակն է որոշ կերպիւ և գիտնական փաստերի հիման վերայ վճռել մի հարց, որ մեզ Հայերիս համար կենաց և մահու խնդիր է. այն է «իրաւունք ունի Հայ ազգը պատմական և գիտնական տեսակէտից նայելով՝ գոյութիւն ունենալ աշխարհիս երեսին, իբրև մի ինքնուրոյն, անկախ ազգայնութիւն, ապրել իբրև մի առանձին քաղաքական մարմին, որը, իբրև մի առողջ, թարմ գործարանաւորութիւն, ազատ և առողջ ապրելու համար ունենար հարկաւոր գործարանները, գործարաններ, որոնք իւրաքանչիւրի առողջ մարմնի անհրաժեշտ մասունք են կազմում։ Ի հակիրճ բան, Հայ ազգը պարունակում է իւր մէջ այն բոլոր բէալական պայմանները, առանց որոց անելուակալելի է ազգայնութեան գոյութիւնը։

Թէ որքան ժամանակակից է մի այսպիսի հեղինակութեան երևալը, երբ Հայկական խնդիրը տէօրետիկական շրջանից անցնելով արդէն պրակտիկական հողի վերայ է դրուած, դորան մի ուրիշ ապացոյցն ևս, բացի հանգամանքից այն է, որ ներկայումս մեր լրագրութեան մէջ տաք վիճաբանութեան նիւթ է դարձել մի ըստ երևոյթին աւելորդ, բայց ըստ ներքին

էութեան խիստ կարևոր խնդիր, «կրօնի դէպի ազգայնութիւնը ունեցած յարաբերութեան խնդիրը» մասնաւորապէս Հայերի համար և յառաջ են եկել երկու տրամագծօրէն հակադրուած քի տէր կուսակցութիւններ, մին՝ կրօնը ընդունելով Հայ ազգի վերաբերմամբ իբրև ազգայնութեան համարեա թէ միակ հիմն, միւսը՝ կրօնը ազգութիւնից տարբեր իմն լինելը, ուրեմն և նորա համար ոչ էական պայման կազմելը ապացուցանել ճգնելով։ Ուստի մասամբ առաջ յառաջաբանի մէջ ապացուցանելով, մասամբ յետոյ, թէ երկու կուսակցութիւնք ևս սխալվում են և խնդիրը իւր բնական կերպարանքից շեղել, հանել են, ընդունելով կրօնը—ազգային անկախ եկեղեցւոյ իմաստով—իբրև ազգայնութեան հիմն հանդերձ, ցոյց տալ այն դերը, որ այսուհետև նա պիտի խաղայ Հայ ազգի պատմական կեանքի մէջ—նա՝ կը լինի աշխատութեանս մի ուրիշ նպատակը։

ՀԱՅԿ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆԻ